ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N: 3

ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-19/29 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով ջրային հոսքերի կարգավորման փականների և պտտվող սկավառակով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան

05 դեկտեմբերի 2019թ.
ժամը. 12:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ռ. Անդրեասյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Գ. Խոսրովյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)
	Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Կ. Բարսեղյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի գնահատման մասին

(Մ. Առաքելյան)

Ընդունել ի գիտություն՝

02.12.2019 թ. «Մեդիսոն Էյբլ» ՍՊ, «Էյչ Գրուպ» ՍՊ և «ИПК и УП» ԵՕՕԴ ընկերություններին ծանուցվել է ներկայացնելու արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկված փաստաթղթերը: Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են ճշգրտված փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ, «Էյչ Գրուպ» ՍՊԸ ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել: «ИПК и УП» ԵՕՕԴ ընկերության կողմից ներկայացված 1-ին չափաբաժնի մասով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրերին, իսկ 2-րդ չափաբաժնի մասով անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

<u>1.1. Ամփոփելով արդյունքները, գնահատող հանձնաժողովը որոշեց</u>՝

ա) «ԱԼԻՈՆ» ՍՊ ընկերության հայտը հրավերով սահմանված պահանջներին չի ներկայացվել և գնահատել անբավարար:

բ) «Մեդիսոն Էյբլ» ՍՊ, «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությունների հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների, «ИПК и УП» ԵՕՕԴ ընկերության հայտը 2-րդ չափաբաժնի մասով

բավարարում են հրավերի պահանջներին: «Մեդիսոն Էյբլ» ՍՊ, «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերություններին 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, իսկ «ИПК и УП» ЕООД ընկերության հայտը 2-րդ չափաբաժնի մասով գնահատել բավարար: «ИПК и УП» ЕООД ընկերության հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

գ) 2-րդ չափաբաժնի մասով՝

- ընտրված մասնակից ճանաչել «ИПК и УП» ЕООД ընկերությանը, որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,
- 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մեդիսոն Էյբլ» ՍՊ ընկերությանը,
- 3-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությանը:

դ) 2-րդ չափաբաժնի համար անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր: Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.2. Բանակցությունների վարման մասին:

Քանի որ 1-ին չափաբաժնի մասով «Մեդիսոն Էյբլ» ՍՊ և «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությունների առաջարկած գինը գերազանցում է գնման հայտով նախատեսված նախահաշվային գները, գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի՝ բանակցությունների վարման նիստ հրավիրել «Մեդիսոն Էյբլ» ՍՊ և «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությունների հետ բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Ռ. Անդրեասյան

_____ Գ. Խոսրովյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կ. Բարսեղյան